



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2014 թվականի N 1253 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆ
ՄԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության 2016 թվականի բյուջետային գործընթացն սկսելու նպատակով՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մշակման գործընթացի՝ Հայաստանի Հանրապետության 2016-2018 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման աշխատանքների իրականացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2002 թվականի հունիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության 2003 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» N 346-Ն որոշմամբ ստեղծված՝ Հայաստանի Հանրապետությունում պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերի մշակման մշտապես գործող բարձրագույն խորհուրդը և աշխատանքները համակարգող մշտապես գործող խումբը շարունակելու են իրենց գործունեությունը Հա-

յաստանի Հանրապետության 2016-2018 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի մշակման ժամանակահատվածում.

2) Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման մարմիններում, ինչպես նաև սույն որոշման 4-րդ կետում նշված մարմիններում (համաձայնությամբ) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության մեթոդական աջակցությամբ 2015 թվականին շարունակվելու է ծրագրային բյուջետավորման ներդրման ուղղությամբ նախապատրաստական աշխատանքների իրականացումը:

3. Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման մարմինների ղեկավարներին՝ ապահովել 2015 թվականի ընթացքում իրականացվելիք ծրագրային բյուջետավորման ներդրման ուղղությամբ նախապատրաստական աշխատանքների իրականացումը:

4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարին, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի ղեկավարին, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարին, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին, Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության պետին, Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի նախագահին, Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի նախագահին, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության նախագահին, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահին, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահին, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին,

Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի նախագահին, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահին, Հայաստանի Հանրապետության հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահին և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահին՝

1) ղեկավարվել սույն որոշման 1-ին կետով հաստատված ժամանակացույցով.

2) ապահովել 2015 թվականի ընթացքում իրականացվելիք ծրագրային բյուջետավորման ներդրման ուղղությամբ նախապատրաստական աշխատանքների իրականացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2014 թ. դեկտեմբերի 16
Երևան

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ



Հավելված
 ՀՀ վարչապետի 2014 թ.
 դեկտեմբերի 16-ի N 1253 - Ա
 որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Ց Ց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ՝
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2016-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ
 ԾՐԱԳՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ
 ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

NN ը/կ	Կատարողները	Կատարման ենթակա աշխատանքները և միջոցառումները	Փաստաթղթերն ստացող պետական մարմինները	Աշխատանքների և միջոցառումների կատարման սահմանային ժամկետները
1	2	3	4	5
ՄԱՍ I. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2016-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
1.	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ 2016-2018 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի (այսուհետ՝ ՄԺԾԾ) և ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման աշխատանքների շրջանակներում ոլորտային հայտերը կազմելու և դրանք ներկայացնելու մեթոդական ցուցումների մշակում և տրամադրում	ՀՀ գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման մարմիններ սույն որոշման 4-րդ կետում նշված մարմիններ՝	մինչև 2014 թվականի դեկտեմբերի 30-ը

1	2	3	4	5
			բացառության ՀՀ կենտրոնական բանկի (սույն ժամանակացույցում՝ այսուհետ՝ հայտատու մարմիններ)	
2.	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՄԺԾԾ-ի և ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծերի հիմքում դրվող բյուջետային եկամուտների առանձին եկամտատեսակների և ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններից մուտքերի կանխատեսումների կազմման մեթոդական ցուցումների մշակում և տրամադրում	հայտատու մարմիններ ՀՀ կենտրոնական բանկ	մինչև 2014 թվականի դեկտեմբերի 30-ը
3	Տվյալ ոլորտի աշխատանքների համակարգման համար պատասխանատու գործադիր իշխանության հանրապետական մարմիններ (սույն ժամանակացույցի I մասում՝ այսուհետ՝ գլխադասային մարմիններ)	ՄԺԾԾ-ի նախագծի մշակման աշխատանքների շրջանակներում ոլորտային քաղաքականության հարցերի շուրջ տվյալ ոլորտում գլխադասային չհանդիսացող պետական կառավարման (այդ թվում՝ նաև ՀՀ տարածքային կառավարման) մարմինների հետ՝ 1) քննարկումների ժամանակացույցի և գլխադասային չհանդիսացող պետական կառավարման մարմինների կողմից իրականացվելիք ծրագրերի գծով ՀՀ 2016-2018 թթ. պետական բյուջեների միջոցների հաշվին կատարվելիք ծախսերի ֆինանսավորման նախնական չափաքանակների՝ այդ մարմինների հետ քննարկման կարգի սահմանում և դրա մասին այդ մարմիններին տեղեկացում 2) քննարկումների անցկացում	տվյալ ոլորտում գլխադասային չհանդիսացող հայտատու մարմիններ	մինչև 2015 թվականի փետրվարի 3-ը մինչև 2015 թվականի ապրիլի 22-ը
4.	Հայտատու մարմիններ ՀՀ կենտրոնական բանկ	ՄԺԾԾ-ի նախագծի հիմքում դրվող բյուջետային մուտքերի կանխատեսումները ներկայացնելը	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2015 թվականի փետրվարի 9-ը
5.	ՀՀ տարածքային կառավարման	ՄԺԾԾ-ի նախագծի հիմքում դրվող բյուջետային	ՀՀ ֆինանսների	մինչև 2015 թվականի

1	2	3	4	5
	մարմիններ (յուրաքանչյուրը՝ իրեն վերապահված իրավասության մատով)	մուտքերի կանխատեսումները կազմելը և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության հետ համաձայնեցված ներկայացնելը	նախարարություն	փետրվարի 9-ը
6.	ՀՀ կենտրոնական բանկ	ՀՀ կենտրոնական բանկի 2016-2018թթ. գործունեության արդյունքում ստացվելիք եկամուտների, կատարվելիք ծախսերի և առաջացող շահույթի (այդ թվում՝ շահույթի բաշխման) կանխատեսումները մշակելը և մանրամասն հիմնավորումներով ներկայացնելը	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2015 թվականի փետրվարի 9-ը
7.	ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի աշխատողների մասնակցությամբ մակրոտնտեսական հարցերով համատեղ աշխատանքային խումբ	ՄԺԾԾ-ի նախագծի հիմքում դրվող մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ առաջարկություններ մշակելը և ներկայացնելը	ՄԺԾԾ-ի մշակման աշխատանքները համակարգող մշտապես գործող խումբ	մինչև 2015 թվականի փետրվարի 27-ը
8.	ՀՀ հանրապետական գործադիր մարմիններ՝ ըստ ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած հարցումների	ըստ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված ցանկի՝ ՄԺԾԾ-ի մշակման համար լրացուցիչ տեղեկատվության տրամադրում	ՀՀ ֆինանսների նախարարություն	ըստ ՀՀ ֆինանսների նախարարության հարցումներում նշված պարբերականության (ժամկետների)
9.	ՀՀ ֆինանսների նախարարություն	պետական ոչ առևտրային կազմակերպությունների բյուջետային հայտով ներկայացվող ծախսերի հաշվարկի ձևաչափի, այն լրացնելու, տվյալների բազա մուտքագրելու կարգի սահմանում		մինչև 2015 թվականի մարտի 5-ը
10.	ՀՀ ֆինանսների նախարարություն	յուրաքանչյուր գլխադասային մարմնի և գլխադասային մարմիններ չունեցող առանձին ոլորտներում ծրագրեր իրականացնող հայտատու մարմնի գծով համապատասխան ոլորտներում ՀՀ պետական բյուջեից կատարվելիք ծախսերի ֆինանսավորման 2016-2017 թթ. ճշգրտված և 2018 թ. կողմնորոշիչ չա-	ՄԺԾԾ-ի մշակման աշխատանքները համակարգող մշտապես գործող խումբ	մինչև 2015 թվականի մարտի 14-ը

1	2	3	4	5
		փաքանակների վերաբերյալ առաջարկություններ մշակելը և ներկայացնելը		
11.	ՄԺԾԾ-ի մշակման աշխատանքները համակարգող մշտապես գործող խումբ	ՄԺԾԾ-ի նախագծի հիմքում դրվող մակրոտնտեսական ցուցանիշների և յուրաքանչյուր գլխադասային մարմնի և գլխադասային մարմիններ չունեցող առանձին ոլորտներում ծրագրեր իրականացնող հայտատու մարմնի գծով համապատասխան ոլորտներում ՀՀ պետական բյուջեից կատարվելիք ծախսերի ֆինանսավորման 2016-2017թթ. ճշգրտված և 2018թ. կողմնորոշիչ չափաքանակների վերաբերյալ առաջարկությունների քննարկելը և ներկայացնելը	ՄԺԾԾ-ի մշակման մշտապես գործող բարձրագույն խորհուրդ	մինչև 2015 թվականի մարտի 21-ը
12.	ՄԺԾԾ-ի մշակման մշտապես գործող բարձրագույն խորհուրդ	ՄԺԾԾ-ի նախագծի հիմքում դրվող մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ և ըստ յուրաքանչյուր գլխադասային մարմնի և գլխադասային մարմիններ չունեցող առանձին ոլորտներում ծրագրեր իրականացնող հայտատու մարմնի՝ համապատասխան ոլորտների ծախսերի ֆինանսավորման 2016-2017թթ. ճշգրտված և 2018 թ. կողմնորոշիչ չափաքանակների վերաբերյալ որոշումների ընդունում		մինչև 2015 թվականի ապրիլի 1-ը
13.	Տվյալ ոլորտում գլխադասային չհանդիսացող հայտատու մարմիններ	ՄԺԾԾ-ի նախագծի մշակման աշխատանքների շրջանակներում ոլորտային քաղաքականության հարցերի շուրջ գլխադասային մարմինների կողմից կազմակերպվող քննարկումներին մասնակցություն		մինչև 2015 թվականի ապրիլի 22-ը (ըստ գլխադասային մարմինների սահմանած ժամանակացույցի)
14.	Գլխադասային մարմիններ չունեցող առանձին ոլորտներում ծրագրեր իրականացնող հայտատու մարմիններ	հիմք ընդունելով ՄԺԾԾ-ի մշակման մշտապես գործող բարձրագույն խորհրդի կողմից հաստատված ՀՀ պետական բյուջեից կատարվելիք ծախսերի ֆինանսավորման 2016-2017թթ. ճշգրտված և 2018թ. կողմնորոշիչ չափաքանակները իրենց	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2015 թվականի ապրիլի 30-ը

1	2	3	4	5
		<p>ուլորտի 2016-2018թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրերի հայտերը (քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերի և ներառյալ դրանով պայմանավորված ՀՀ 2016-2018թթ. պետական բյուջեների ծախսերի գծով առաջարկությունները) մշակելը և ներկայացնելը</p>		
15.	Գլխադասային մարմիններ	<p>հիմք ընդունելով ՄԺԾԾ-ի մշակման մշտապես գործող բարձրագույն խորհրդի կողմից հաստատված ՀՀ պետական բյուջեից կատարվելիք ծախսերի ֆինանսավորման 2016-2017 թթ. ճշգրտված և 2018 թ. կողմնորոշիչ չափաքանակները՝ իրենց ուլորտի 2016-2018 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրերի հայտերը (քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերի և ներառյալ դրանով պայմանավորված ՀՀ 2016-2018 թթ. պետական բյուջեների ծախսերի գծով առաջարկությունները, ընդ որում, ինչպես ամփոփ, այնպես էլ՝ ըստ տվյալ ոլորտում գլխադասային չհանդիսացող մարմինների գծով) մշակելը և ներկայացնելը</p>	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2015 թվականի մայիսի 9-ը
16.	<p>ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե ՀՀ մշակույթի նախարարություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայություն ՀՀ առողջապահության նախարարություն</p>	<p>մեթոդական ցուցումներում նշված ծրագրերի գծով բյուջետային ծրագրերի նկարագրերի (անձնագրերի) մշակում և տրամադրում</p>	ՀՀ ֆինանսների նախարարություն	<p>ավարտուն տեսքի բերված՝ իրենց ուլորտային 2016-2018 թթ. ՄԺԾԾ-ի հայտի հետ միասին</p>

1	2	3	4	5
	<p>ՀՀ արդարադատության նախարարություն</p> <p>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն</p> <p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</p> <p>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</p> <p>ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն</p> <p>ՀՀ սփյուռքի նախարարություն</p> <p>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն</p> <p>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն</p>			
17.		<p>հայտատու մարմինների հետ իրենց ՄԺԾՕ հայտերի շուրջ ՀՀ վարչապետի մոտ քննարկումների անցկացում (ըստ անհրաժեշտության)</p>		<p>մինչև 2015 թվականի հունիսի 2-ը</p>
18.	<p>Տվյալ ոլորտում գլխադասային չհանդիսացող հայտատու մարմիններ</p>	<p>ՀՀ վարչապետի մոտ սույն ժամանակացույցի 17-րդ կետով նախատեսված քննարկման արդյունքներով ավարտուն տեսքի բերված՝ ՄԺԾՕ-ի իրենց ոլորտային մասերի նախագծերը մշակելը և ներկայացնելը</p>	<p>տվյալ ոլորտում գլխադասային մարմիններ</p>	<p>մինչև 2015 թվականի հունիսի 10-ը</p>
19.	<p>Գլխադասային մարմիններ չունեցող առանձին ոլորտներում ծրագրեր իրականացնող հայտատու մարմիններ</p>	<p>ՀՀ վարչապետի մոտ սույն ժամանակացույցի 17-րդ կետով նախատեսված քննարկման արդյունքներով ավարտուն տեսքի բերված՝ ՄԺԾՕ-ի իրենց ոլորտային մասերի նախագծերի (ծախսային ռազմավարության) մշակելը և ներկայացնելը</p>	<p>ՀՀ ֆինանսների նախարարություն</p>	<p>մինչև 2015 թվականի հունիսի 19-ը</p>
20.	<p>Տվյալ ոլորտում գլխադասային մարմիններ</p>	<p>ՀՀ վարչապետի մոտ սույն ժամանակացույցի 17-րդ կետով նախատեսված քննարկման արդյունքներով ավարտուն տեսքի բերված՝ ՄԺԾՕ-ի</p>	<p>ՀՀ ֆինանսների նախարարություն</p>	<p>մինչև 2015 թվականի հունիսի 19-ը</p>

1	2	3	4	5
		իրենց ոլորտային մասերի նախագծերի (ծախսային ռազմավարության)՝ ներառյալ համապատասխան ոլորտներում գլխադասային չհանդիսացող պետական կառավարման մարմինների ծախսերի 2016-2018 թթ. ֆինանսավորման չափաքանակների վերաբերյալ առաջարկություններ մշակելը և ներկայացնելը		
21.	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՄԺԾԾ-ի նախագծի վերջնական տարբերակը կազմելը և ներկայացնելը	ՀՀ կառավարություն	մինչև 2015 թվականի հուլիսի 3-ը
22.	ՀՀ կառավարություն	ՄԺԾԾ-ի նախագծի քննարկում և հաստատում		մինչև 2015 թվականի հուլիսի 8-ը
23.	ՀՀ կառավարության աշխատակազմ	ՀՀ կառավարության կողմից հաստատված ՄԺԾԾ-ն ՀՀ Ազգային ժողով ներկայացնելը՝ ի գիտություն	ՀՀ Ազգային ժողով	մինչև 2015 թվականի հուլիսի 18-ը
ՄԱՍ II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
24.	ՀՀ բնապահպանության նախարարություն	«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում նշված ընկերություններից յուրաքանչյուրի գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների ցանկը ներկայացնելը (այն դեպքում, երբ ընկերության գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների թիվը մեկից ավելի է, նաև ընկերության կողմից վճարվող բնապահպանական վճարի գումարի՝ այդ համայնքների միջև բաշխման համամասնությունները և դրանց հաշվարկման սկզբունքները)	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ մարզպետարաններ	մինչև 2015 թվականի հունվարի 21-ը
25.	ՀՀ ֆինանսների նախարարություն	«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման	ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ	մինչև 2015 թվականի փետրվարի 11-ը

1	2	3	4	5
		մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում նշված ընկերությունների կողմից 2012-2014 թթ. արդյունքներով ՀՀ պետական բյուջե փաստացի մուծված, այդ օրենքով նախատեսված բնապահպանական վճարների գումարների մասին տեղեկատվություն ներկայացնելը՝ ըստ ընկերությունների և նշված վճարների առանձին տեսակների	իրավիճակների նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն	
26.	ՀՀ ֆինանսների նախարարություն	համայնքների՝ 2016 թվականի բյուջեների նախագծերի մշակման և ՀՀ պետական բյուջեից հատկացումներ ստանալու նպատակով բյուջետային ֆինանսավորման հայտերը կազմելու և ներկայացնելու պարտադիր բնույթի մեթոդական ցուցումների և խորհրդատվական բնույթ կրող ուղեցույցների (վերջիններս՝ անհրաժեշտության դեպքում) մշակում և ուղարկում	ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության միջոցով՝ տեղական ինքնակառավարման մարմիններ	մինչև 2015 թվականի փետրվարի 13-ը
27.	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն	համաձայն «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի պահանջների՝ ՀՀ համապատասխան համայնքների կողմից ՀՀ բնապահպանության նախարարություն և ՀՀ առողջապահության նախարարություն ներկայացված բնապահպանական ծրագրերով նախատեսվող միջոցառումների իրականացման առաջնայնությունների և դրանց ֆինանսավորման համամասնությունների վերաբերյալ իրենց դիրքորոշումների մասին տեղեկացում	ՀՀ բնապահպանության նախարարություն և ՀՀ առողջապահության նախարարություն բնապահպանական ծրագրեր ներկայացրած ՀՀ համապատասխան համայնքներ	ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 26-ի N 1544-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում
28.	ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն	տեղական ինքնակառավարման մարմիններից ՀՀ համայնքների բյուջեներին ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից տրվելիք ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկներում կիրառվելիք հողի հարկի և գույքահարկի գծով՝ ըստ առանձին համայնքների	ՀՀ մարզպետարաններ	մինչև 2015 թվականի ապրիլի 2-ը

1	2	3	4	5
		2014 թվականի ելակետային տվյալների ՀՀ մարզպետարաններում ստացման, ինչպես նաև այդ տվյալները ՀՀ մարզպետարանների կողմից ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ներկայացնելու համար ժամկետների սահմանում		
29.	ՀՀ տարածքային կառավարման մարմիններ (յուրաքանչյուրը՝ իրեն վերապահված իրավասության մասով)	ՀՀ պետական բյուջեից սուբվենցիա տրամադրելու մասին համայնքներից 2016 թվականի ծրագրային հայտեր ստանալը, քննարկելը, ամփոփելը և ներկայացնելը	ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ գործադիր իշխանության հանրապետական համապատասխան մարմիններ	մինչև 2015 թվականի հուլիսի 2-ը (ըստ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության սահմանած ժամանակացույցի)
30.	«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի գործողության շրջանակներում ընդգրկված համայնքների ղեկավարներ՝ ՀՀ տարածքային կառավարման մարմինների միջոցով	«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն ՀՀ համապատասխան համայնքների կողմից ՀՀ բնապահպանության նախարարության և ՀՀ առողջապահության նախարարության հետ համաձայնեցված և համայնքի ավագանու կողմից հաստատված բնապահպանական ծրագրերը և դրանց գծով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից սուբվենցիաներ ստանալու մասին հայտերը ներկայացնելը	ՀՀ բնապահպանության նախարարություն	մինչև 2015 թվականի հուլիսի 17-ը
31.	ՀՀ տարածքային կառավարման մարմիններ (յուրաքանչյուրը՝ իրեն վերապահված իրավասության մասով)՝ համաձայնեցված	ՀՀ գործադիր իշխանության հանրապետական համապատասխան մարմինների հետ համագործակցել վերջիններիս համակարգին վերաբերող՝ ՀՀ մարզպետների՝	ՀՀ հանրապետական գործադիր համապատասխան մարմիններ	մինչև 2015 թվականի հուլիսի 17-ը

1	2	3	4	5
	ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի հետ	1) կողմից իրականացվող ծրագրերի գծով և, 2) ենթակայության ներքո գտնվող հիմնարկների 2016 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման գործում		
32.	ՀՀ կառավարությանն առնթեր ՀՀ ոստիկանություն	ՀՀ համայնքների բյուջեներին ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից տրվելիք ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկներում կիրառվելիք 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ, բնակչության պետական ռեգիստրի հիման վրա հանրապետության հաշվառված բնակչության թվի՝ ըստ համայնքների ելակետային տվյալների տրամադրում	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2015 թվականի հուլիսի 17 -ը
33.	ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ համայնքների բյուջեներին ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից տրվելիք ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկներում կիրառվելիք՝ ըստ առանձին համայնքների ելակետային տվյալների տրամադրում՝ ՀՀ ֆինանսների նախարարության մեթոդական ցուցումների համաձայն	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2015 թվականի հուլիսի 18-ը
34.	ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ գործադիր իշխանության հանրապետական համապատասխան մարմիններ	ՄԺԾԾ-ով նախատեսված ոլորտային ծրագրերի գծով սահմանված ծախսերի չափաքանակների շրջանակներում ՀՀ պետական բյուջեից սուբվենցիա տրամադրելու մասին համայնքների 2016 թվականի ծրագրային հայտերի քննարկում		մինչև 2015 թվականի հուլիսի 25-ը (ըստ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության սահմանած ժամանակացույցի)
35.	Հայտատու մարմիններ (յուրաքանչյուրը՝ իրեն վերապահված իրավասության մասով)	մեթոդական ցուցումների համաձայն իրենց և համակարգի 2016 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը (ներառյալ ծրագրային բյուջե-	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2015 թվականի օգոստոսի 5-ը

1	2	3	4	5
		տավորման ձևաչափով, ինչպես նաև տարածքային կտրվածքով՝ առանձնացված ըստ Երևան քաղաքի և առանձին մարզերի) կազմելը՝ հաշվի առնելով նաև 34-րդ կետով նախատեսված քննարկումների արդյունքները, և ներկայացնելը		
36.	Հայտատու մարմիններ (յուրաքանչյուրը՝ իրեն վերապահված իրավասության մասով) ՀՀ կենտրոնական բանկ	ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծի հիմքում դրվող բյուջետային եկամուտների առանձին եկամտատեսակներից և ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններից մուտքերի կանխատեսումների մասին հայտերը կազմելը և ներկայացնելը	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2015 թվականի օգոստոսի 5-ը
37.	ՀՀ տարածքային կառավարման մարմիններ (յուրաքանչյուրը՝ իրեն վերապահված իրավասության մասով)	ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծի հիմքում դրվող բյուջետային եկամուտների առանձին եկամտատեսակներից և ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններից մուտքերի կանխատեսումների մասին հայտերը կազմելը և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության հետ համաձայնեցված ներկայացնելը	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2015 թվականի օգոստոսի 5-ը
38.	Հայտատու մարմիններ ՀՀ կենտրոնական բանկ	օտարերկրյա պետությունների ու միջազգային ֆինանսական կազմակերպությունների և այլ անձանց կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված վարկերի ու դրամաշնորհների՝ իրենց համակարգում 2016 թվականին օգտագործման մասին կանխատեսումները կազմելը և ներկայացնելը	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2015 թվականի օգոստոսի 5-ը
39.	ՀՀ կենտրոնական բանկ	ՀՀ կենտրոնական բանկի 2016 թվականի կապիտալ ներդրումների ծրագրի և վարչական ու գործառնական ծախսերի նախահաշիվների նախագծերը՝ հիմնավորումների հետ միասին ներկայացնելը (նաև 2016 թվականի համար բանկի կողմից ծրագրա-	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2015 թվականի օգոստոսի 5-ը

1	2	3	4	5
		վորվող ցուցանիշների համեմատականը 2015 թվականի համար հաստատված, սպասողական և 2014 թվականի փաստացի համապատասխան ցուցանիշների հետ՝ ըստ «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատվելիք ծախսային հոդվածների գծով բանկի բացատրագրում նշվող ծախսերի առանձին տարրերի և դրանց նկատմամբ առաջիկա տարվա համար ծրագրավորվող ցուցանիշների փոփոխման բացատրությունը)		
40.	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից ՀՀ համայնքների բյուջեներին տրվելիք ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվարկներում օգտագործման համար ստացված՝ պետական մարմինների կողմից հաշվառվող ելակետային տվյալների մասին տեղական ինքնակառավարման մարմիններ ծանուցումներ ուղարկելը	ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն (ՀՀ մարզպետարանների միջոցով տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրելու համար)	նշված տվյալներն ամբողջական ձևով ստանալու օրվանից 10-օրյա ժամկետում
41.	Հայտատու մարմիններ ՀՀ կենտրոնական բանկ	ՀՀ կառավարության 2016 թվականի պետական բյուջեի ուղերձի մասը կազմող՝ 2016 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունների մասին ՀՀ կառավարության զեկույցի իրենց իրավասությանը վերաբերող համապատասխան հատվածների նախագծերը (մինչև 3 էջի սահմաններում) մշակելը և ներկայացնելը	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2014 թվականի օգոստոսի 21-ը
42.	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և	«Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկա-	ՀՀ ֆինանսների նախարարություն	«Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝

1	2	3	4	5
	արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ մարզպետարաններ ՀՀ համայնքների ղեկավարներ (յուրաքանչյուր մարմինը՝ իրեն վերապահված իրավասության մասով)	մուտների կորուստները պետության կողմից փոխհատուցելու կարգի մասին» ՀՀ օրենքի կիրարկման 2016 թվականի գործընթացի իրականացման ապահովում		ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստները պետության կողմից փոխհատուցելու կարգի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից սահմանված ժամկետներում (օրենքով նախատեսված դեպքում)
43.	Հայտատու մարմիններ (յուրաքանչյուրը՝ իրեն վերապահված իրավասության մասով) ՀՀ կենտրոնական բանկ	ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող ՀՀ օրենքների նախագծերը մշակելը (ըստ անհրաժեշտության) և ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ կառավարություն	մինչև 2015 թվականի սեպտեմբերի 4-ը
44.		ՀՀ պետական կառավարման մարմինների՝ 2016 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի, դրանց գծով առաջարկվող ֆինանսավորման չափերի, մակրոտնտեսական ցուցանիշների, բյուջետային եկամուտների, ծախսերի և դեֆիցիտի կանխատեսումների քննարկում և համաձայնեցում ՀՀ վարչապետի մոտ		մինչև 2015 թվականի սեպտեմբերի 16-ը
45.	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ վարչապետի մոտ՝ սույն ժամանակացույցի 44-րդ կետում նշված քննարկումների արդյունքները հաշվի առնելով Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների 2016 թվականի տարեկան ծրագրի նախագիծը մշակելը և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնելը	ՀՀ կառավարություն	մինչև 2015 թվականի սեպտեմբերի 22-ը
46.	ՀՀ գործադիր իշխանության	ՀՀ օրենքների պահանջների համաձայն ՀՀ 2016 թ.	ՀՀ կառավարություն	մինչև 2015 թվականի

1	2	3	4	5
	<p>հանրապետական մարմիններ (յուրաքանչյուրը՝ իրեն վերապահված իրավասության մասով)</p>	<p>պետական բյուջեի նախագծի հետ միասին կամ նշված նախագծի կազմի մեջ ՀՀ Ազգային ժողով ներկայացնելու ենթակա ծրագրերի՝ ՀՀ վարչապետի մոտ՝ սույն ժամանակացույցի 44-րդ կետում նշված քննարկումների արդյունքներով նախագծերը մշակելը և սահմանված կարգով ՀՀ կառավարություն ներկայացնելը՝ հավանություն ստանալու համար, այդ թվում՝</p> <p>1) <u>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</u>՝ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն 2016 թվականին իրականացվելիք գիտական, գիտատեխնիկական պետական և նպատակային ծրագրերի նախագծերը.</p> <p>2) <u>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն</u>՝ «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի 2016 թվականի ծրագրի նախագիծը.</p> <p>3) <u>ՀՀ առողջապահության նախարարություն</u>՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն Առողջապահության պետական նպատակային 2016 թվականի տարեկան ծրագրի նախագիծը.</p> <p>4) <u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</u>՝ ա. «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի համաձայն Երեխայի իրավունք-</p>		<p>սեպտեմբերի 22-ը</p>

1	2	3	4	5
		<p>ների պաշտպանության 2015 թվականի տարեկան ծրագրի նախագիծը,</p> <p>բ. «Հայաստանի Հանրապետության հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5.1-ին հոդվածի համաձայն Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2016 թվականի տարեկան ծրագրի նախագիծը.</p> <p>գ. «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն Զբաղվածության կարգավորման 2015 թվականի պետական ծրագրի նախագիծը.</p> <p>5) <u>ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն`</u> <u>«Սահմանամերձ տարածաշրջանների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն` Սահմանամերձ տարածաշրջանների զարգացման 2016 թվականի ծրագրի նախագիծը.</u></p> <p>6) <u>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն`</u> <u>«Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի 2016 թվականի միջոցառումների տարեկան ծրագրի նախագիծը</u></p>		
47.	Հայտատու մարմիններ (յուրաքանչյուրը՝ իրեն վերապահված իրավասության մասով)	ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ 2016-2018 թթ. ՄԺԾՕ-ում ընդգրկված և 2016 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտում, որպես բյուջետային ֆինանսավորում պահանջող, նախատեսվելիք ծրագրերի նախագծերը մշակելը	ՀՀ կառավարություն	մինչև 2015 թվականի սեպտեմբերի 22-ը

1	2	3	4	5
		և անհրաժեշտության դեպքում դրանք ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնելը		
48.	Հայտատու մարմիններ	ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող ՀՀ օրենքների նախագծերի քննարկման ապահովում ՀՀ կառավարությունում	ՀՀ կառավարություն	մինչև 2015 թվականի սեպտեմբերի 24-ը
49.	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագիծը կազմելը և ներկայացնելը	ՀՀ կառավարություն	մինչև 2015 թվականի սեպտեմբերի 24-ը
50.	ՀՀ կառավարություն	ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծի քննարկում և այն ՀՀ Ազգային ժողով ներկայացնելու մասին որոշման ընդունում	x	մինչև 2015 թվականի սեպտեմբերի 25-ը
51.	ՀՀ կենտրոնական բանկ	ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծի վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական եզրակացությունը ներկայացնելը	ՀՀ կառավարություն	մինչև 2015 թվականի հոկտեմբերի 1-ը
52.	ՀՀ կառավարության աշխատակազմ	ՀՀ կառավարության հավանությանն արժանացած ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագիծը և դրա հետ միասին ՀՀ օրենքների պահանջների համաձայն այլ նյութեր ներկայացնելը	ՀՀ Ազգային ժողով	մինչև 2015 թվականի հոկտեմբերի 2-ը
53.	ՀՀ ֆինանսների նախարարություն	«Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի (բացառությամբ պետական և ծառայողական գաղտնիք պարունակող հարցերի)՝ օրենքով սահմանված կարգով հրապարակում	x	ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագիծը ՀՀ Ազգային ժողով ներկայացնելու օրվանից եռօրյա ժամկետում
54.	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ ֆինանսների նախարարության ինտերնետային կայքում «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի հանրային քննարկումների հրավերի հրապարակում	x	ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագիծը ՀՀ Ազգային ժողով ներկայացնելու օրվանից եռօրյա ժամկետում
55.	ՀՀ ֆինանսների նախարարություն	«Հայաստանի Հանրապետության 2016 թվականի	x	ՀՀ կառավարության

1	2	3	4	5
		պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի հանրային քննարկումների արդյունքներով կազմված ամփոփաթեթի և նշված օրենքի նախագծի լրամշակված տարբերակի տեղադրում ՀՀ ֆինանսների նախարարության ինտերնետային կայքում		կողմից 2016 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակը ՀՀ Ազգային ժողով ներկայացնելուն հաջորդող օրը
56.	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ համայնքների բյուջեներին ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից տրվելիք հատկացումների չափերի մասին ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններին տեղեկությունների (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկման մեթոդաբանությունը) ուղարկում	ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն (ՀՀ մարզպետարանների միջոցով տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրելու համար)	«Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի պաշտոնական հրապարակումից հետո մեկամսյա ժամկետում
57.	Հայտատու մարմիններ (յուրաքանչյուր մարմին՝ իրեն վերապահված իրավասության մասով	ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ծախսային ծրագրերի գծով հատկացումները տարածքային բաշխման ներկայացնելը (առանձնացված՝ ըստ Երևան քաղաքի և առանձին մարզերի)	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2015 թվականի հոկտեմբերի 16-ը
58.	Հայտատու մարմիններ (յուրաքանչյուր մարմին՝ իրեն վերապահված իրավասության մասով)	ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանի կազմման գործընթացի իրականացման ապահովում	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ ֆինանսների նախարարության կողմից սահմանված ժամկետներում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

